Գրիգոր Հազիւ կրցաւ այս վճռին վրայ իւր ծիծաղը սանձել վասնզի այն իւր առաջին արշաւանաց օրերը ծերը տեսեր եւ ճանչեր էր, եւ այսչափ խօսք նորա բերնեն կ'իմանար թէ մեծ գովութիւն էր: Էսեր էր նաեւ թէ ծիծաղի եւ շատախօսութեան մեծ թշնամի էր նա: Ուստի լուռ կեցաւ. իսկ ծերը անշարժ կ'ենալեն վերջ՝

— Սուրէնէ լուր ունի՞ս,— հարցուց:

— Մէկտեղ էինք Դամասկոս, ճամփան մեր փախստեան ժամանակ արաբաց խումբ մը զմեզ բաժնեց, մենք Եփրատէ անցանք, նա Կ'ոմակենի ճամփան բռնեց, անկից վերջը լուր չունիմ:

— Քաջ մարդ է նա,— ըսաւ ծերը դարձեալ Թենի ի դառնալով:

Իսկ Սէթայ, որ իւր նամակին ընթերցմունքը վերջացուց, դարձաւ երիտասարդին.

— Ահա իշխանեն նամակ բերաւ զօրավարը, կը գրէ թէ ամիսի մը չափ ժամանակ դեռ պիտի ուշանայ, վասնզի Պոլիս մեծ խռովութիւնք ելեր են այս քանի մը ամսուան մէջ, Կոստանդին կայսրը թունաւորուած Մարտինէ մորմեն մեռէր է, եւ տեղը իւր փոքր եղբայրն է թագաւորէր: Հիմա ժողովուրդը եւ զօրքր ապստամբէր են, օրինաւոր ժառանգը՝ դեռ պատանի մը՝ նստուցեր են աթոռը: Իշխանը կը յուսա եւ կը գրէ թէ ռագրատունեաց Ասպետին ազատութիւնն այս անգամ ապահով է, վասնզի աքսորանաց դարձին հրովարտակը ելեր է. եւ թէ իրեն բարեկամ հայազգի մը զօրավար կարգ ված է Կարնոյ յունաց բանակին. ուստի ինք Թէոդոսուպոլիս պիտի երթայ նախ իրեն հետ տեսնուելու եւ յետոյ պիտի դառնայ հոս:

— Եթէ իշխանն ուշանայ՝ ես ինչ պէտք է ընեմ, իշխանուհի,— հարցուց Գրիգոր:

— Այդ բանին համար ամենեւին հոգ մ'ընէր. ես քեզի համար զբաղմունք կը գտնեմ: Ահա ուրիշ նմսմակ մ'էլ կայ, որ Արծրունեառ Սահակ իշխանը կը գրէ եւ գունդ մը զօրք ինձմէ կը խնդրէ Մարդաս տանի իւր զօրաց օգնութեան պարսիկ ասպատակաց դէմ: Վարդ եթէ այստեղ լինէր՝ նա կ'ուղարկէի, որովհետեւ հօրը հետ է, դու էլ ր իմ զաւակս ես քեզ կ'ուղարկեմ եթէ յանձն կառնուս:

— Ամենայն սիրով, հիմա եթէ կը հրամայէք: